Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Պ-1175-20.05.2011-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասում՝

1) 1-ին կետը «սառնարանային պահպանության» բառերից հետո լրացնել «, գյուղատնտեսական մթերք վերամշակող» բառերով, իսկ «օգտագործվող» բառից հետո՝ «(նախատեսվող)» բառով.

2) 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել.

3) 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար օգտագործվող հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ համայնքի ղեկավարի կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ որոշում ընդունելուց և շինարարության թույլտվություն տալուց հետո, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՏԵՂԵԿԱՆՔ – ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

	Առարկության, առաջարկության հեղինակը,	Հոդվածը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն
1	2	3	4	5
1.	Աժ պատգամավորներ Գ.Սահակյան Վ.Այվազյան Հ.Բիշարյան	1-ին հոդված	Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 1-ին կետում. ա) «սառնարանային պահպանության» բառերից հետո լրացնել «, գյուղատնտեսական մթերք վերամշակող» բառերը. բ) «օգտագործվող» բառը փոխարինել «օգտագործվող (նախատեսվող) բառերով.	Ընդունվել է
2.	Աժ պատգամավորներ Գ.Սահակյան Վ.Այվազյան Հ.Բիշարյան	1-ին հոդված	Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 2-րդ կետում. 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել	Ընդունվել է
3.	Աժ պատգամավորներ Գ.Սահակյան Վ.Այվազյան Հ.Բիշարյան	1-ին հոդված	Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետում. 3-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3) համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ ջերմոցային, անասնապահական, թռչնաբուծական, պտուղ-բանջարեղենի սառնարանային պահպանության, գյուղատնտեսական մթերք վերամշակող տնտեսությունների և ձկնաբուծական արհեստական լճակների կառուցման համար օգտագործվող հողամասի նպատակային նշանակությունը համարվում է փոփոխված՝ համայնքի ղեկավարի կողմից այդ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու վերաբերյալ որոշում ընդունելուց և շինարարության թույլտվություն տալուց հետո, որն արտացոլվում է հողային ֆոնդի ընթացիկ հաշվառման տվյալներում և ամենամյա հողային հաշվեկշիռներում:»	Ընդունվել է

4.	ԱԺ պատգամավորներ Գ.Սահակյան Վ.Այվազյան Հ.Բիշարյան	2-րդ հոդված	Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:	Ընդունվել է ի գիտություն